Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն**
   ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Լոնդոն, Անգլիա (10/06-11/06) Բրյուսել, Բելգիա (11/06-13/06) Բուխարեստ, Ռումինիա (14/06-15/06)

4. **Հրավիրող կողմը**
   Լոնդոն, Անգլիա՝ «ԻզիՋեթ» ավիաընկերություն
   Բրյուսել, Բելգիա՝ Եվրոպայի աերոնավիգացիոն անվտանգության կազմակերպություն (այսուհետ՝ ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպություն)
   Բուխարեստ, Ռումինիա՝ «Ուիզէյր» ավիաընկերություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Լոնդոն, Անգլիա

Հանդիպում «ԻզիՋեթ» ավիաընկերության գլխավոր մենեջեր Էջի Սմիթի և ցանցային կառավարման մենեջեր Ջորդի Պինտրեի հետ:

Բրյուսել, Բելգիա

Հանդիպում ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության գլխավոր տնօրենի, ինչպես նաև մի շարք այլ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

Մասնակցություն ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության ժամանակավոր հանձնաժողովի նիստերին:

Սահմանված ընթացակարգերի համաձայն՝ մշտական հանձնաժողովի շրջանակներում, նախագահության ստանձնում:

Բուխարեստ, Ռումինիա

Հանդիպում «Ուիզէյր» ավիաընկերության գլխավոր կոմերցիոն պատասխանատու Ջորջ Միչալոպոլոսի և ցանցային կառավարման տնօրեն Պյոտր Տրավկայի հետ:

Հանդիպում **Tarom** ավիաընկերության դաշինքների միջազգային հարաբերությունների և դաշինքների գծով տնօրեն Վայօրել Վլադիուի և կառավարչական կազմի հետ:

Հանդիպում Ռումինական Քաղաքացիական ավիացիոն իշխանության գլխավոր խորհրդատու պարոն Նելու Բիրլայի և բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ: Գործընկերոջ հետ կիսվել քաղաքացիական ավիացիայում առկա հնարավորություններով և մարտահրավերներով: Հիմնականում խոսվել է.

- Կազմակերպության կառուցվածքի վերաբերյալ, կենտրոնանալով ինքնաֆինանսավորվող կառույց դառնալու հնարավորության վրա:
- Ընդհանուր ավիացիայի զարգացում:
- Անօդաչու թռչող սարքերի կառավարում:
- Կիբեռ անվտանգություն:

6. Քննարկված թեմաները

Լոնդոն, Անգլիա

«ԻզիՋեթ» ավիաընկերության ներկայացուցիչներին ներկայացվել է բոլոր հնարավոր առաջարկները դեպի Երևան ուղիղ չվերթներ իրականացնելու վերաբերյալ:

Ստացվել է կարծիք մեր նոր մոտեցման վերաբերյալ՝ Հայաստանից նոր ուղիներ զարգացնելու հարցում:

Բրյուսել, Բելգիա

Ժամանակավոր խորհրդի նիստի ընթացքում քննարկվել և ներկայացվել են մի շարք մարմիններից հաշվետվություններ, ինչպես նաև քննարկվել են առաջարկություններ՝ մասնավորապես Եվրակոնտրոլ կազմակերպության

ռազմաքաղաքացիական կոմիտեի և կազմակերպության խորհրդատվական մարմնի միավորման գործընթացի կազմակերպման ընթացակարգերը:

Կազմակերպության ֆինանսական տնօրենի, մայրուղային գանձումների տնօրենի պայմանագրի երկարաձգում 1 տարով:

Գլխավոր Տնօրենի կողմից ներկայացվել է կազմակերպության Անձնակազմի նոր քաղաքականությունը:

Մի շարք հարցեր կախված Մաստրիխտի օդային տարածքի հետ:

ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության կողմից երկներին աջակցության ծրագրի զեկույցը:

Որպես տեղեկատվություն ներկայացվել է ''փորձառու անձնանց'' խմբի կողմից կազմված խորհրդատվություն՝ ուղղված կազմակերպության հետագա կառավարման և զարգացման գործընթացին, մասնավորապես՝ կանխատեսվող օդային երթևեկության աճի հետ կապված հոսքերի կառավարման հնարավոր տարբերակները:

Բուխարեստ, Ռումինիա

Ներկայացվել է Wizz Air-ի ներկայացուցիչներին բոլոր հնարավոր առաջարկները դեպի Երևան ուղիղ չվերթներ իրականացնելու համար:

Ստացվել է կարծիք մեր նոր մոտեցման վերաբերյալ Հայաստանից նոր ուղիներ զարգացնելու հարցում:

Քննարկվել է նորաստեղծ Երեւան-Բուխարեստ երթուղու արդյունավետությունյունը:

Tarom ավիաընկերությունը բավարարված է Երեւան-Բուխարեստ երթուղով և ցանկանում է ավելացնել թռիչքների հաճախականությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Լոնդոն, Անգլիա

«ԻզիՋեթ» ավիաընկերությանը հետաքրքրեց մեր առաջարկը դեպի Հայաստան թռիչքներ կատարելու վերաբերյալ, միևնույն ժամանակ խնդրեց մանրամասն տվյալներ՝ առկա ուղիների աշխատանքի վերաբերյալ:

Եթե մեր ուղարկած մանրամասն տվյալները իրենց հետաքրքրեն նրանք կուղարկեն իրենց առաջարկը հնարավոր համագործակցության վերաբերյալ:

Բրյուսել, Բելգիա

Հանդիպում **Ryanair-ի** գլխավոր կոմերցիոն պատասխանատու Դեվիդ Օբրայանի հետ: Ի սկզբանե Ryanair-ը առաջարկ էր ուղարկել դեպի Հայաստան ուղիղ չվերթներ իրականացնելու վերաբերյալ, որից հետո մեր կողմից ուղարկվել է պատասխան առաջարկ, քանի որ իրենց պայմանները այդքան էլ հարմար չէին Հայաստանի համար: Ryanair-ից ստացվել է պատատասխան, որտեղ նշված է, որ իրենք պատրաստ են ավելի հարմար պայմաններ տրամադրելու Հայաստանին:

Բուխարեստ, Ռումինիա

Wizz Air-ը մեծ աջակցություն է ցուցաբերում մեր նոր մոտեցմանը Հայաստանից նոր ուղիներ զարգացնելու հարցում և կուղարկի իր առաջարկը Հայաստանից ուղիղ չվերթներ իրականացնելու վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Լոնդոն, Անգլիա

Եթե մեր ուղարկած տվյալները «ԻզիՋեթ» ավիաընկերությանը հետաքրքրեն՝ նրանք կուղարկեն իրենց առաջարկը հնարավոր համագործակցության վերաբերյալ:

Բրյուսել, Բելգիա

ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության հետ ձեռք է բերվել համաձայնություն Հայաստանի Հանրապետությանը մոտակա 2 տարիների

ընթացքում օդային երթևեկության կազմակերպման ոլորտում անվճար աջակցության ցուցաբերելու շուրջ: Մշակվել է նախագիծ, որտեղ արտացոլված են աջակցության շրջանակները:

Ձեռք է բերվել պայմանավորվածություն ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության ցանցային կառավարչի՝ ՋՈ ՍՈՒԼԹԱՆԱՅԻ հետ, ով կայցելի Հայաստան և կներկայացնի Եվրոպական օդային տարածքի ներկա վիճակը, ապագայի զարգացման տեսլականը, ինչպես նաև ոլորտում առկա մարտահրավերները:

Բուխարեստ, Ռումինիա

Ռումինական Քաղաքացիական ավիացիոն իշխանությունը ինքնաֆինանսավորվող կառույց է և մեզ էլ խորհուրդ են տալիս այդ ձևաչափը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Լոնդոն, Անգլիա

Հանդիպում **Bloomberg** ծրագրային ապահովման ընկերության գլխավոր տնօրեն Թոդ Բայերի հետ:

Ներկայացվել է Հայաստանի հնարավորությունները ընդլայնելու առկա երթուղային ցանցը:
Քննարկվել է Bloomberg- ի հնարավորությունները Հայաստանի մասին հոդվածներ հրապարակելու վերաբերյալ:
Նրանք պատրաստ են ուսումնասիրել մի շարք հոդվածներ, որոնք կարող են գրել Հայաստանի մասին, զբոսաշրջիկների հոսքը ավելացնելու նպատակով:

Բրյուսել, Բելգիա

Որոշվել է ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության մշտական հանձնաժողովի նիստի օրը, որը կկայանա սույն թվականի նոյեմբերի 28-ին:

Բուխարեստ, Ռումինիա

Ընդհանուր ավիացիայի ոչ կոմերցիոն թռիչքների սերտիֆիկացման պրոցեսը իրականացվում է երրորդ կողմի հաստատված կազմակերպության կողմից և նրանք խորհուրդ են տալիս այդ ձևաչափը:

Անօդաչու թռչող սարքերի կարգավորման հետ կապված շատ գործ չկա արված, բայց նրանք այդ հարցին շատ լուրջ են մոտենում:

Նրանք սկսել են իրենց կարողությունների շրջանակներում ստեղծել Կիբեր անվտանգության ապահովման հնարավորություններ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

X _____